# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԾՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ

# ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԾՀԱՊՁԲ-11/11-15/1 ծածկագրով ԾՀ ընթացակարգի արդյունքում 2015թ-ի մարտի 16-ին կնքված պայմանագրում 2015թ-ի դեկտեմբերի 7-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Ապրանքների մի խմբաքանակի մատակարարման գործընթացը սկսելու նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: 1. Կողմերը համաձայնագրով հաստատել են ապրանքների մատակարարման վճարման ժամանակացույցը:

2. Հաստատվել է պայմանագրի նոր խմբագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 9.1 կետի համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:
Էլ.փոստ՝ info@interlimens.com:
Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
2015թ. մարտի 16-ին կնքված N ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/11-15/1 պայմանագրի

ք. Երևան "0.Հ..." դեկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Վանգաս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Սահակյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 16/03/2015թ. կնքված N ՖՆ- ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/11-15/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1 հաստատել Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ հավելված 1-ը նոր խմբագրությամբ, ըստ Համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 հաստատել Համաձայնագրով նախատեսված ապրանքների 1-ին խմբաքանակի համար մատակարարման վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված 2-ի:

1.3 սահմանել Պայմանագրի 4.2 կետը հետևյալ հետևյալ նոր խմբագրությամբ.

Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Պայմանագրի հավելված 1-ով նախատեսված Ապրանքի 1-ին խմբաքանակի համար դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելված 2-ով սահմանված ժամկետներում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

Դրամական միջոցների փոխանցումը 2-րդ խմբաքանակի համար կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 9.1 կետում նշված համաձայնագրով նախատեսված ամիսներին:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Սուվորովի 10 |
| ք.Երևան, Մ. Ադամյան 1 | Հեռ. 091-31-66-22 |
| ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02629081 | Հ/Հ 1570014552760100 |
| Հ/Հ900013574018 | ՀՎՀՀ 90032472 |
| Հ/Հ90001320... | Էլ. հասցեն՝ info.vang... |
| ------------ (ստորագ...) | ------------ (ստոր...) |

Հավելված 1
"16" մարտի 2015թ. կնքված
N ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/11-15/1 պայմանագրի հիման վրա
"01" դեկտեմբերի 2015թ. կնքված համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար հրդեհային անվտանգության կրակմարիչների ձեռքբերման

| Չ/Հ | Ապրանքի* | | | | | | Միավորի գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | քանակը | մատակարարման վայրը | մատակարարման ժամկետը | |
| 1 | — Կրակմարիչ փոշային, ԿՓ-5 | Կրակմարիչ փոշային, ԿՓ-5՝ A, B, C դասի հրդեհների մարման համար, լիցքավորված փոշու զանգվածը՝ 5 կգ, շիթի երկարությունը ոչ պակաս՝ 3 մ, շահագործումը -4°C-ից 50°C ջերմաստիճանի սահմաններում, եզրաչափերը՝ 520x150մմ | հատ | 15 | ՀՀ ֆինանսների նախարարություն, ք.Երևան Մ.Խորենացի 7 | 1-ին խմբաքանակի մատակարարումն իրականացվում է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2015թ. դեկտեմբերի 20-ը | 12000 |
| | | | | 135 | | 2-րդ խմբաքանակի մատակարարումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 31-րդ աշխատանքային օրը | |

* Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ. Ադամյան 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013574018
Հ/Հ 900013302016
--------------------

**ՎԱՃԱՌՈՂ**
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Սովետական 10
Հեռ. 091-31-66-22
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570014552760100
ՀՎՀՀ 90032472
էլ. հասցեն՝ info.vangas@mail.ru
--------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
"16" մարտի 2015թ. կնքված
N ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/11-15/1 պայմանագրի հիման վրա
"..07...." դեկտեմբերի 2015թ. կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

| Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | |
|---|---|---|
| | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| Կրակմարիչ փոշային, ԿՓ-5 (1-ին խմբաքանակը՝ 15 հատ) | 180000 | 180000 |

* *Գումարները ներկայացված են աճողական:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ. Ադամյան 1
ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ900013574018
Հ/Հ900013202016

---------------------------

**ՎԱՃԱՌՈՂ**
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Սուվորովի 10
Հեռ. 091-31-66-22
,Ամերիաբանկն ՓԲԸ
Հ/Հ 1570014552760100
ՀՎՀՀ 90032472
էլ. հասցեն՝ info.vangas@mail.ru

---------------------------